ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔԸ

Արմինե Հրաչիկի Ասլանյանի «Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորողների հոգեհուզական հիմնահարցերի և առողջական վիճակի հիգիենիկ բնութագիրը» թեմայով ԺԴ.00.05 «Հիգիենա, մասնագիտական ախտաբանություն և թունաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ավագ դպրոցներում սովորողները հասարակության այն ստվար խումբն է, որը որոշում է ազգի վաղվա առողջությունը, կադրային ներուժը, պետության տնտեսությունը, ինչու ոչ և պաշտպանունակությունը: Այդ իսկ կապակցությամբ բնակչության այս խմբի առողջական, հոգեհուզական վիճակին տրվում է բժշկա-սոցիալական մեծ նշանակություն:

Այս տարիքի դեռահասները ենթարկվում են նաև արտաքին միջավայրի, ուսումնական գործընթացի զանազան գործոնների ազդեցությանը, որոնք կարող են բերել օրգանիզմի տարբեր համակարգերի ընդհանուր մոբիլիզացիայի, սթրեսային վիճակների, դիմադրողականության անկման և կարող են առաջացնել առողջական, հոգեհուզական վիճակի որոշակի փոփոխություններ: Ավագ դպրոցներում սովորողների առողջական և հոգեհուզական վիճակը բնակչության սոցիալական բարեկեցության բժշկական սպասարկման մակարդակի յուրահատուկ բարոմետր է: Այս տարիքում դեռահասներն ունեն դպրոցական տարիների ընթացքում ձևավորված որոշակի առողջական ստատուս, և այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նրանց շրջանում կատարել աշխատանքներ նպատակաուղղված այդ «խոցելի» խմբի առողջական և հոգեհուզական վիճակի ուսումնասիրմանը:

Այսօր ՀՀ-ում անբավարար են այն գիտական աշխատանքները, որոնք լուսաբանում են ավագ դպրոցներում սովորողների առողջական, հոգեհուզական վիճակը և այն պայմանավորող գործոնների ուսումնասիրումը:

Ա.Հ. Ասլանյանի հետազոտությունը վերը գրվածի լույսի ներքո արդիական և կարևոր կարելի է համարել:

Հետազոտության նպատակն է եղել տալ Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորողների հոգեհուզական հիմնահարցերի և առողջական վիճակի հիգիենիկ բնութագիրը:

Աշխատանքում բարձրացված խնդիրները՝ հետազոտել և գնահատել Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորողների կենսասոցիալական, հոգեհուզական կարգավիճակը, ֆիզիկական զարգացումը, առողջական վիճակը և այդ խնդիրների համար օգտագործվող մեթոդներն օգնել են հեղինակին արժևորելու աշխատանքի գիտական նորույթը: Տրվել է Երևան քաղաքի հանրակրթական ավագ դպրոցներում սովորողների հոգեհուզական տարբեր կարգավիճակների և առողջական վիճակի դինամիկ փոփոխությունների բնութագիրը, մշակվել են առաջարկություններ ուղղված Երևան քաղաքի հանրակրթական ավագ դպրոցներում սովորողների առողջական վիճակի պահպանմանն ու բարելավմանը:

Ելնելով հետազոտության նպատակից և խնդիրներից ընտրվել են Երևան քաղաքի տարբեր վարչական շրջանների 8 ավագ դպրոցներում սովորող 1382 դեռահասներ (609 տղան 773 աղջիկ), որոնց շրջանում իրականացվելեն կենսասոցիալական գործոնների, հոգեհուզական վիճակի և հարմարման առանձնահատկությունների, ֆիզիկական զարգացման, առողջական վիճակի համալիր հետազոտություն, դեռահաս աղջիկների վերարտադրողական առողջության հետազոտություն:

Հավաքած տվյալների մուտքագրումը կատարվել է SPSS ծրագրում: Կոդավորվել են ինչպես հարցաթերթի հարցերի պատասխանները, այնպես էլ առողջական վիճակը բնութագրող ցուցանիշները: Մուտքագրած տվյալների վերլուծությունը կատարվել է

SPSS ծրագրային փաթեթի միջոցով՝ համընդհանուր ճանաչում ստացած վիճակագրական մեթոդներով: Համեմատվող խմբերի նորմալ բաշխումով տվյալների տարբերության հավաստիության գնահատումը կատարվել է ըստ Ստյուդենտի՝ տարբերության հավաստիության գործակիցը անկախ t և ANOVA տեստերի օգնությամբ որոշելով, իսկ փոխադարձ կապի առկայությունը պարզելու համար իրականացվել է կորելյացիոն անալիզ: Արդյունքների հավաստիությունը գնահատվել է առնվազն 95% ($t \geq 1.96$, $p \leq 0.05$) հավանականությամբ:

Աշխատանքի «գրականության տեսության» գլխում լուսաբանելով առկա գիտական գրականությունը հեղինակը հանգում է եզրակացության, որ ներկա ժամանակ ՀՀ-ում գործող ավագ դպրոցներում դեռևս շարունակվում են ուսումնական գործընթացի հետ կապված բարեփոխումները: Սակայն, եթե անընդհատ իրականացվող փոփոխությունների հիմքում չեն դրվում դեռահասների տարիքային առանձնահատկությունները, դրանք կարող են նպաստել դեզադապտացիայի, տագնապայնության, ագրեսիվության, հուզական խանգարումների առաջացմանը, ինչը կարող է բերել անձի ներոտիզացիայի և հոգեմարմնական հիվանդությունների ի հայտ գալուն:

Սեփական հետազոտությունների գլուխներում հեղինակն անդրադառնում է Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորող դեռահասների կենսասոցիալական կարգավիճակին, ապրելակերպին, անառողջ սովորությունների տարածվածությունը (որն էլ ավելի մեծանում է ուսումնառության ավարտին), սեփական առողջության անբավարար գնահատմանը (որը վատթարանում է ուսումնառության ավարտին), վերարտադրողական առողջությունը պայմանավորող որոշ ցուցանիշների անբարենպաստ վիճակին:

Աշխատանքում նշվում է, որ ավագ դպրոցում սովորող 14-15 տարեկան (10-րդ դասարան) դեռահասները բավական լավ են հարմարվում ուսումնակրթական և միևնույն ժամանակ սոցիալական նոր միջավայրին: Սակայն դեռահասների

շրջանում նշվում է բարձր տագնապայնություն, մեղքի զգացման բարձր մակարդակ և բացասական վերաբերմունք սեփական անձի հանդեպ:

Հետազոտության ընթացքում պարզվել է, որ դեռահասների հոգեկան առողջության ձևավորման համար որոշիչ նշանակություն ունեն նրանց և մեծահասակների միջև ձևավորվող միջանձնային կապերը, կրթական նոր համակարգին հարմարվելու ընթացքում առաջացած դժվարությունները, անբավարար և անհանգիստ քունը, ինչպես նաև ներընտանեկան միջավայրի բնութագիրը, որոնք բերում են դեռահասի մոտ տագնապայնության և առողջության հետ կապված գանգատների առաջացման:

Ավագ դպրոցում սովորողների շրջանում իրականացված ֆիզիկական զարգացման հետազոտությունից հեղինակը պարզել է, որ տարիքասեռային բոլոր խմբերում դեռահասների մեծամասնությունն ունի միջին քաշ, միջին հասակ և ներդաշնակ ֆիզիկական զարգացում, բայց ուսումնառության ընթացքում ավելանում է անբավարար քաշ ունեցող դեռահասների թիվը, իսկ 15 տարեկան պատանիների խումբն առանձնակի ուշադրության է արժանի, քանի որ նրանցից յուրաքանչյուր հինգերորդն ունի ավելցուկային քաշ:

Ավագ դպրոցում սովորողների շրջանում իրականացված բժշկական քննությունը ցույց է տվել, որ ուսումնառության ընթացքում աճում է հիվանդացության ցուցանիշը: Ուսումնառության երեք տարիների ընթացքում դիտվում է հատկապես նյարդային հիվանդությունների թվի աճ: Մտահոգիչ է այն փաստը, որ ուսումնառության սկզբին բացարձակ առողջ դեռահասների թիվը կազմել է ընդամենը 7.4%: Գործնականում առողջ է ավագ դպրոցականների մոտ 1/3-ը, որոնց շրջանում, սակայն, արձանագրվել է մորֆոֆունկցիոնալ մեկ կամ մի քանի շեղում: Քրոնիկ հիվանդություններ ունի սովորողների 60.7%-ը: Դպրոցն ավարտելիս գրեթե կրկնակի չափով պակասում է բացարձակ առողջ դեռահասների թիվը, իսկ քրոնիկ հիվանդություններ ունեցողների թիվն ավելանում է 1,2 անգամ: Ուսումնառության

ավարտին ոչ միայն նվազում է առողջ երեխաների թիվը, այլև ֆունկցիոնալ շեղումներն անցնում են քրոնիկ հիվանդությունների:

Հեղինակը բացահայտել է կորելյացիոն կապ դեռահասների շրջանում նյարդային համակարգի և մարսողական օրգանների հիվանդությունների առկայության և հոգեհուզական վիճակի ու հարմարման գործընթացի միջև:

Ամփոփելով շարադրվածը հարկ է նշել, որ այսօր դեռահասների շրջանում դիտվում է առողջական վիճակի վատթարացման միտում, քանի որ շուրջ 10 տարի առաջ ՀՀ ուսանողների շրջանում իրականացրած հետազոտությունը վկայում էր, որ առաջին կուրսերում սովորողների շրջանում առաջին առողջական խումբը կազմում էր մոտավորապես 30%, մինչդեռ ներկայիս ավարտական դասարաններում սովարողների շրջանում այն կազմում է ընդամենը 7.4%: Այս փաստի լույսի ներքո կարելի է ավելի արժնորել գրախոսված աշխատանքը և այնտեղ բարձրացված հարցերը:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերեն լեզվով 157 համակարգչային տեքստի էջերում, կազմված է ներածությունից, գրականության տեսությունից, սեփական հետազոտություններից և քննարկումներից, եզրահանգումներից, գործնական առաջարկներից, գրականության ցանկից և հավելվածից: Գրականության ցանկն ընդգրկում է 264 աղբյուր, որից 1/3-ը վերջին հինգ տարվա: Եզրահանգումները բխում են ատենախոսության նպատակից և խնդիրներից, ստացված արդյունքները կարող են կիրառվել համապատասխան բնագավառներում:

Ատենախոսությունն ավարտուն, ինքնուրյուն կատարված հետազոտություն է և աշխատանքի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ չունենք, սակայն ակնկալում ենք ստանալ պարզաբանումներ մի քանի հարցի վերաբերյալ.

1. գրականության ցանկը համարակալված չէ, ինչը դժվարացնում է դրանից օգտվելու գործընթացը,

2. ցանկալի կլիներ հետազոտության արդյունքներն ամփոփվեին մեթոդական ուղեցույցի ձևով, որն ավելի արդյունավետ կդարձներ դրանց կիրառումը համապատասխան ոլորտներում:

Ամփոփելով վերը շարադրվածը կարելի է եզրակացնել, որ Արմինե Հրաչիկի Ասլանյանի «Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորողների հոգեհուզական հիմնահարցերի և առողջական վիճակի հիգիենիկ բնութագիրը» թեմայով ԺԴ.00.05 «Հիգիենա, մասնագիտական ախտաբանություն և թունաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ
դատական բժշկության ամբիոնի
պրոֆ., բ.գ.դ. Կ.Կ. Ավագյան

Մ. Հերացու անվ. ԵՊԲՀ
դատական բժշկության ամբիոնի
պրոֆ., բ.գ.դ. ստորագրությունը հաստատում եմ
ԵՊԲՀ գիտական քարտուղար
բ.գ.դ., պրոֆ. Տ.Գ. Ավագյան

25.03.2021թ.